

**ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱՎՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ XVII–XVIII ԴԴ. ԵԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՐԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՄՈՒՐԱԴ ՇԱՄԲԱԹՅԱՆ
Ճարտարապետության դոկտոր,
ԵԳՊԱ պրաֆեսոր
ՌՎ ԳԱԱ քղթակից անդամ

Նայաստանում ուշ միջնադարում ճարտարապետները եթե մոնումենտալ, առաջին հերթին՝ եկեղեցական շենքերի հորինվածքների համար դիմեցին նախորդ շինարարական փուլերում արդեն մշակված տիղերին, աղա հարդարանքի խնդիրները լուծելիս ցուցաբերեցին իսկական ստեղծագործական մոտեցում. վերամշակեցին արդեն ծանոթ հարդարանքի տարրերը և ստեղծեցին նորերը, դարաշրջանի գեղագիտական լմբոնումներին ու դատվիրատու նոր սոցիալական խավի՝ հայ վաճառականության դահանջներին ու ճաշակին համադատասխան:

Բազմազան են ուշ միջնադարյան հայ ճարտարապետության մեջ կիրառված արտահայտչական միջոցները: Դրանք, առաջին հերթին, տարրերվում են ըստ ճարտարապետական դրույթների, աղա՝ կախված են օգտագործվող շինանյութի տեսակից (բազալտ, տուֆ, աղյուս):

Սյունիքում XVII–XVIII դդ. մոնումենտալ շենքերը փաստորեն գորկ են հարդարանքի տարրերից: Շինաքարը՝ կողիտ մշակված բազալտը, սահմանափակ հնարավորություններ էր ընձեռնում կառույցների հարդարանքի համար, բացվածքները գորկ են շրջանակներից, երեսակալներից, շքամուտքի տիղարային ձևն է կիսաշրջանաձև կամարով, դարզունակ իմուստներով խորշը, որի մեջ գտնվում է ուղղանկյուն դուռը: Շենքերի կերպարի արտահայտչականությունը փաստորեն ստացվում է ողջ ծավալի և առանձին մասերի ներդաշնակ համաշափորյուններով:

Այլ է վիճակը Արցախի, Վաստորականի, Նախշնանի ստեղծագործական դրույթներում, որտեղ շինարարները հմտորեն, վարդետությամբ և ճաշակով օգտագործեցին բազմատեսակ տուֆերի, ֆելզիտների, աղյուսի հնարավորությունները: Շակատների ձևավորման համար կիրառվեցին այնոյիսի ավանդական տարրեր, ինչորին են քիվը, երեսակալը, շքամուտքը, զարդաքանդակը, որոնց հետ նաև՝ դատկերաքանդակը, իսկ ներսում՝ որմնանկարը:

Եկեղեցական շենքի արտահայտիչ և անհատական կերպար ստանալու համար ինչորես ճակատներում, այնուև կ գմբեթներում կիրառվեց բազմազունությունը, ընդ որում՝ բազմազան հնարքներով և նկարվածքով: Շախմատաձև շարվածքը կիրառվում էր ճակատների հարդարությունում ու գմբեթի թմբուկում (Սուլնու Ս. Գևորգ), ողջ ճակատներում և գմբեթում (Ս. Ստեփանոս Նախավկա

վանք), շենքի ողջ դարագծով ընթացող գոտիով առանձնացող դատերի ստորին մասում (Արրակունիսի Ս. Կարապետ վանք), միայն ճակտոններում (Քանաքեռի Ս. Աստվածածին):

Տարածված էր մեկընդմեջ մուզ և բաց գույնի սրբատաշ տուֆից հորիզոնական շարքերով ճակատների և գմբեթների մշակումը. այդմես են շարված մասների վանքի փոքր եկեղեցու գմբեթը, Ագուլիսի Ս. Թովմա, Փառակայի Ս. Շմավոն և Ս. Նակոր Նայրաղետ եկեղեցիների ճակատները: Բազմագունության մեկ այլ հնարքն էր ճակատների հարդարանքի տարրերը այլ, սովորաբար բաց գույնի քարից իրականացնելը: Այն հատկապես տարածված էր Արցախում, որտեղ եկեղեցիների շքամուտքերը շինվում էին կաթնագույն ֆելզիտ տուֆից, որը հակադրվում էր դատերի կողմտատաշ, գորչ կամ կաղտսավոն բազալտից շարված հարթությանը (Օակուոհ Ծաղկավանք, Կավաքավանք, Ներիերի Ս. Գրիգորիս): Իսկ Երից մանկանց վանքում սրբատաշ դեղնավուն տուֆից են շարված գմբեթը, ճակտոնները, շքամուտքը, լուսամուտների շրջանակները:

Վաստուրականում բազմագունություն է կիրառված Կոռուց անաղատում, սև ու սղիտակ քարերի հաջորդական շարքերով են շինված եկեղեցու գմբեթի վեղաբը, զանգակատան երկրորդ հարկը, իսկ սև դատերի ֆոնի վրա սղիտակ ֆելզիտից է իրականացված ժամատան շքամուտքը:

Գեղարվեստական արտահայտչականության տղավորիչ հնարքներից է նաև եկեղեցիների գմբեթներն աղյուսից կառուցելը: Այստիսի գմբեթները հուշարձանի ընդհանուր կերպարում ստեղծում են գունային խաղ, իսկ միևնույն ծավալատարածական հորինվածքում երկու տարրեր՝ քարի և աղյուսի հարդարանքի համակարգերի զուգակցումը բավական ինքնատիպ է: Ինչդես աղյուսաշեն գմբեթների թմբուկները, այնուև կամ ամրողովին աղյուսից կառուցված կամ երեսադատված ճակատները լուծված են մի քանի հարթություններով՝ իրականացված մեկը մյուսի մեջ ներառված որմնակամարների ու որմնախորշերի ձևով, իհմնականում պլաքան ու ցոռկաձև կամարներով: Պատերի մակերեսների այստիսի բազմադրան լուծումը ստեղծում է հետաքրիք լույս ու ստվերի խաղ՝ դառնալով հարդարանքի իհմնական միջոցը: Սակայն դեռ է նշել, որ աղյուսի դեկորատիվ հնարավորությունները լրիվ չեն օգտագործվում՝ չկար ձևավոր աղյուս, չեր կիրառվում ջնարակը:

ա) Նարդարանքի տարրեր

Ուշ միջնադարի հարդարանքի առանձին մոտիվները կիրառվում էին արդեն IX-XIV դդ. ճարտարապետության մեջ: Այդմիսին են քիվերի, խոյակների, իմորատների, շքամուտքերի առանձին տիպերը: Միաժամանակ, առաջ են գալիս հնավանդ ձևերի վերաբակված և նորովի ստեղծված հարդարանքի տար-

թեր, որոնք բնորոշ են միմիայն XV-XVIII դդ. հայ ճարտարապետությանը: Զգալի է նաև ղարսկական դեկորատիվ արվեստի ազդեցությունը հատկապես Նախշնանի դղրոցի և Աստղատականի հուշարձաններում:

Որդես քիվ, հատկապես Սյունիքում, թե՛ եկեղեցական և թե՛ աշխարհիկ շենքերի մեծամասնության համար ծառայում է տանիքի քարե սալերի՝ ճակատի հարթությունից քարձակային դուրս բերված մասը: Կիրառվում էր նաև դեռ վաղ միջնադարից հայտնի քիվի դարձ ձևը՝ հորիզոնական սալիկ, նրա տակ տեղադրված թեր տաշված կամ տրամատավորված դահող մասով: Վերջինս բաղկացած է կամ սուկ մեկ կիսազգանիկից (Ազուլիսի Ս. Քրիստովոր, Խոր Վիրապ), կամ զոյլ կիսազգանիկներից և միջանկյալ սալիկներից (Երևանի Կաթողիկե): Հանդիրում է ևս սալիկ, կորազիծ տաշված դահող մասով (Չորի Ս. Աստվածածին): Վաստուրականում ուշագրավ է վաղ միջնադարին բնորոշ այնպիսի քիվի կիրառումը, ինչորին ատամնավորն է (Կոտոց անապատ, Փրխուզ, Սոխուրթ):

Լուսամուտների բացվածքների ձևավորմանը մեծ ուշադրություն է դարձված Այրարատում և Նախշնանում, իսկ Սյունիքի և Արցախի բազալտաշեն մոնումենտալ կառուցվածքների մեջ մասը զիսազարդ կամ շրջանակ չունի: Որոշ դեղքերում հենց բացվածքի ձևն է հանդիսանում լուսամուտի գեղարվեստական արտահայտչականության հիմնական միջոցը, ինչորեւ և օրինակ՝ խաչաձև դատուիաններում:

Ի տարբերություն վաղ միջնադարի և IX-XIV դդ. հուշարձանների, ուշ միջնադարի շենքերի լուսամուտները հազվադեպ են ձևավորվել զիսազարդերով: Վերջինիս սալկավագիկ օրինակներից է Քամարենի Ս. Աստվածածին եկեղեցին: Զևավորման հիմնական տարրը XV-XVIII դդ. եղավ քանդակազարդ շրջանակը. այս երևույթը բացատրվում է առաջին հերթին այն հանգամանքով, որ ուշ միջնադարում լուսամուտների բացվածքի հիմնական ձևը ուղղամկյունն էր (ճանավոր դեղքն է քառակուսին), որի ձևավորման հարմար եղանակը դարձնուվ քանդակած միաշերտ կամ բազմաշերտ շրջանակն է: Ինչորեւ կորազիծ, այնուհետև կը ուղղամկյուն լուսամուտների շրջանակների մշակման հիմնական միջոցը շրաբարն էր, որն ընդհանրապես դարձավ ուշ միջնադարի հարդարանքի ամենատարածված տարրը:

Ուղղամկյուն, քանդակազարդ լայն շրջանակով լուսամուտների բացվածքները զարդարելը կիրառվել էր դեռևս Նայաստանի XI-XIII դդ. եկեղեցիներում ու զավթիներում (Կեչարիսի Կաթողիկե, Անիի Տիգրան Դոնեսի, Գոշավանքի Ս. Գրիգոր, Նաղմականքի, Մարմաշենի վանքի, Յաղաց քարի Ս. Կարապետ եկեղեցիներ, Շովիաննավանքի գավիթ և ուրիշներ): Սակայն շրջանակի մշակումը շրաբարով ուշ միջնադարի շինարարական արվեստի արգասիքն էր:

XVII դարում լուսամուտների՝ ճակատների հարթությունում շեշտելու գոր-

ծընթացը բերեց բավականին բարդ դեկորատիվ համակարգերի ստեղծմանը: Լուսամուտների բացվածքները, շրջանակից բացի, ներառվեցին ողջ ճակատի ձևավորման համար նախատեսված դեկորատիվ գոտիների ճյուղավորումների, խաչաձև քանդակների մեջ (Յղնայի Ս. Աստվածածին, Շոռորի Կուսանաց անադաստ, Կոտոր անադաստ, Ստեփանոս Նախավլա վանք և այլն): Իսկ այն դեղքերում, երբ լուսամուտները չեն միահյուսված տվյալ ճակատի հարդարանքի մյուս տարրերի հետ, առաջ իրենք ներառված են շղթայաձև քանդակազարդ գոտիներով խաչաձև շրջանակով (Երևանի Շոռավոր, Մուղնու Ս. Գևորգ) կամ ավելի բարդ հորինվածքը ունեցող ձևավորում են ստանում՝ չորս կողմից շրջադատվում են խաչքարանման հյուսածոն, ցանցկեն քանդակներով, որոնք միասին հսկա խաչքարանդակ են կազմում (Քանաքեռի Ս. Դակոր): Այսդիսի լուծումները բավական արտահայտիչ են դարձնում բացվածքների հարդարանքը, իսկ հատկապես հյուսիսային և հարավային դասերի կենտրոնական՝ ճակտոնների տակ տեղադրված լուսամուտները դաշնում են հուշարձանների երկայնական ճակատների ձևավորման հիմնական և մեծ հնչեղություն ունեցող տարրը:

Ամենահարուստ մշակումն ունեն ժամանակակից վանքի լուսամուտները: Եյուսիսային և հարավային ճակատներում նրանք ունեն խաչաձև շրջանակ, ներառված՝ եկեղեցու դարագծով ձգվող հորիզոնական գոտու վրա հենվող, զույգ կիսասյունիկներով որմնականարի մեջ: Վերջինիս մակերեսը մշակված է բազմագույն բարերի շարվածքով, սղիտակ բարից է հյուսածոն քանդակազարդ լայն կամարը: Իսկ արևելյան ճակատի կենտրոնական լուսամուտը, ունենալով խաչաձև շրջանակ և եռաթերթ կամարով որմնախորշ, բազմագունությունից բացի, հարդարված է նաև ընդելուզմանք (ինկրուստացիա)՝ գունավոր, աստղաձև տաշված բարերի մողայիկ շարվածքով:

Ուշ միջնադարում վերամշակվեցին իմուստների ու խոյակների ավանդական ձևերը: Նրանց IX-XIV դդ. տարածված տիղոր՝ թեքադիր ստորին մասով ուղղանկյուն թակաղաղ, տակին՝ կիսագլանիկ, ենթարկվեց ձևափոխումների: Փոխվեցին իմուստի բաղկացուցիչ տարրերի տեղերը (Վերևում՝ կիսագլանիկ, ներքևում՝ թակաղաղ, ինչպես, օրինակ՝ Մուղնիում), կամ վերացվեց թակաղաղի թեքադիր մասը (Յղնայի զանգակատուն): Կիրառվում էր նաև իմուստի ամենատարզ ձևը՝ միայն հորիզոնական սալիկի թեքադիր ստորին մասով (Քանաքեռի եկեղեցիներ): Այս ժամանակաշրջանի իմուստների ու խոյակների ամենատարածված, կարելի է ասել՝ զանգվածաբար կիրառվող ձևը եղավ նրանց շրջաքարային մշակում ունեցող տիղը: Այն ընդունված էր բոլոր ճարտարադրամատական դրուցներում և առաջին հերթին օգտագործվում էր եկեղեցիների՝ արևմուտքից կցվող սրահների նույթերի ու որմնասյունների համար (Քանաքեռի Ս. Դակոր և Ս. Աստվածածին, Մուղնու Ս. Գևորգ, Շոռորի Ս. Դա-

կոր, Նավուց թարի Ս. Աստվածածին եկեղեցիներ, Էջմիածնի Մայր տաճարի ու Ստեփանոս Նախավկա վանքի գանգակատներ և այլն):

Ծքաքարային մշակումով հարդարանք ստացան նաև խոյակները, որոնք, փաստորեն, ուշ միջնադարում հանդիդում են հիմնականում զանգակատների ռոտոնդաներում և սակավաթիվ սրահներում: Ծքաքարով կամ նրա նման եռաթերթիկ փորվածքով են մշակված Էջմիածնի Մայր տաճարի, Ստեփանոս Նախավկա, Մուղնու վանքերի զանգակատների, Վարագավանքի սրահի խոյակները:

Այրարատում, Նախիչևանում, Ասրբատականում ճակատների ձևավորման ակտիվ տարրերից էր շենքի ողջ դարագծով ձգվող գոտին, որը լինում էր կամ կիսագլանիկից, կամ ավելի հաճախ՝ շղթայաձև քանդակից (այսդես կոշված «սեղուկյան» շղթա): Գոտիները տարվում են ինչպես հորիզոնական (Մուղնի, Ագույսի Ս. Շոփհաննես, Շոռորի Կուսանաց անալատ, Արքակունիսի Ս. Կարաղետ, Ստեփանոս Նախավկա, Թաղեհի վանքերի), այնպես էլ աստիճանաձևներ (Ցղնայի Ս. Աստվածածին եկեղեցի):

Միջնադարյան հայ ճարտարադեսության հարդարանքի այնոյիսի բնորոշ և տարածված ձևը, ինչորիսին ճակատների ու զմբեթների դեկորատիվ կամարաշարն էր, ուշ միջնադարում տարածում չգտավ: Ճակատների կամարաշարով մշակման փաստորեն միակ օրինակը եղավ Արքակունիսի Ս. Կարաղետ վանքի եկեղեցին, իսկ զմբեթների թմրուկների նման հարդարանքը հանդիդում է Էջմիածնի Մայր տաճարում, Ստեփանոս Նախավկա, Երից մանկանց վանքերում:

Գոտիները լայնորեն օգտագործվել են նաև եկեղեցական շենքերի ներսի հարդարանքում: Նրանք տարվել են մույթերի իմլուստների բարձրությամբ, ողջ դարագծով (Թաղեհի վանք) կամ միայն բեմի արքիդով (Քանաքեռի եկեղեցիներ, Մուղնու և Ստեփանոս Նախավկա վանքեր), կրկմելով իմլուստների տրամադր:

XVII դ. եկեղեցական շենքերի արտաքին հարդարանքում իրենց տեղադրության շնորհիվ բավական ակտիվ տարր են հանդիսանում ճակտոնազարդերը (ակրոտեր): Նրանց ծավալները, որվագծվելով երկնքի ֆոնի վրա, զգալի հարատացնում էին հուշարձանների կերպարը: Ճակտոնազարդերն ունեին ամենատարբեր ձևեր: Ավանդականը, որը փոխանցվել էր XIII դ. հայ ճարտարադեսության ժառանգույթունից, եկեղեցու մանրակերտերն են:

Միջնադարում այս ճակտոնազարդերը երկու ենթատիղի էին՝ ամբողջական եկեղեցու և միայն զմբեթի մանրակերտեր: Առաջին բնորոշ օրինակներն են Շատիճավանքի, Շաղմատի, Բարձրաքաշ Ս. Գրիգոր վանքերի մանրակերտերը: Ուշ միջնադարում տարածված բազմանիստ թմրուկով և բրգաձև վեղարով զմբեթի մանրակերտն էր, դրված եկեղեցիների տաճիքին, ճակտոնի գագաթին (Ռամիսի Ս. Աստվածածին, Գաղի, Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցիներ,

Երից մանկանց, Թաղեի, Մուղնու Ս. Գևորգ վանքեր): Իսկ եկեղեցու մանրակերտի փաստորեն միակ օրինակը Երևանի Չորավորինն է, ընդ որում դրված արևմտյան գավիթ-սրահի տանիքին, միջին կամարի առանցքով: Այն չի կրկնում հոլշարձանի հորինվածքը, այլ վերարտադրում է ընդհանրապես զմբեթավոր կենտրոնակազմ կառույց, քառակուսի հատակագծով, չորս ճակատներում կամարակաղ մեծ բացվածքներով ծավալով, դսակված ութանիստ թմբուկով և բրգաձև վեղարով զմբեթով:

Եթե միջնադարում Նայաստանում ճակտոնազարդերը աշխ չին ընկնում քազմազանությամբ, առաջ XVII-XVIII դդ. ստեղծվեցին նրանց մի շարք ինքնատիլ տարատեսակներ: Նախիջևանում (Երնջակ, Գողյան գավառներ) որդես ճակտոնազարդեր դրվում էին խոյի, ցույի փոքրածավալ քանդակներ (Ծոռորի Կուսանաց անաղատ, Ս. Նակոր եկեղեցի), իսկ Ատրուատականում Ստեփանոս Նախավկա վանքի ճակտոնների և հովհարածն վեղարի նիստերի գագաթներին՝ քարե թևավոր խաչեր, որը նորույթ էր հայկական եկեղեցիների հարդարանքում: Միաժամանակ, այստեղ որդես զմբեթի վեղարի ջրհորդանի քար՝ դրված են ամենատարբեր կենդանիների գլուխների քանդակներ, իսկ զմբեթատակ քառակուսու անկյունային ծավալների երկթեր տանիքի գագաթին՝ վայրի գագանների արձանիկներ, որոնք, ըստ Էռլյան, նույնութես ճակտոնազարդեր են:

XVII դ. լայնորեն կիրառվեց նաև հայկական դեկորատիվ արվեստի մի այլ հնարք ևս՝ շենքի անկյունների կիսասյունիկներով ճշակումը (Արևելյան Նայաստանի տուֆակերտ հոլշարձաններում): Գմբեթների թմբուկների և շենքի ճակատների ձևավորման գործում ակտիվ դեր ունենալ երկրաշափական և հյուսածն զարդարանդակներով վարդյակները (Ստեփանոս Նախավկա վանք, Խոր Վիրապ, Քանաքեռի եկեղեցիներ և այլն):

Ուշ միջնադարում սրբատաշ տուֆից կառուցված եկեղեցիների արևմտյան ճակատների հարթությունների ձևավորման կարևոր տարրը հանդիսացան դեկորատիվ որմնախորշերը, որ նույնութես նորույթ էր միջնադարյան Նայաստանի շինարարական արվեստում: Նախիջևանի և Այրարատի հոլշարձանների զգալի մասը (թե՛ արևմուտքից սրահ ունեցող և թե՛ առանց սրահի եկեղեցիները) արևմտյան դասում, շրամուտքի երկու կողմում, սիմետրիկ, ունեն կամարակաղ, բավական մեծ շափերի, բայց փոքր խորությամբ խորշեր, որոնք շրամուտքի խորշի հետ միասին ստեղծում էին այս ճակատի եռակամար ինքնատիլ կերպարը: Խորշերը մեծ մասամբ ավարտվում են կիսաշրջանաձև կամարով, սակայն հանդիդում են նաև ցոռված կամարներով նույնութես (օրինակ՝ Ազուլիսի Ս. Քրիստովափոր եկեղեցի): Իրենց շափերով խորշերը լինում են հավասար շրամուտքին (Քանաքեռի Ս. Նակոր և Ս. Աստվածածին, Ծոռորի Ս. Նակոր եկեղեցիներ), կամ փոքր-ինչ ցածր (Արքակունիսի Ս. Կարապետ վանք):

Խորշով դարփակված դատի մակերեսը լինում է միանգամայն հարթ (Ծոռք, Ազուլիս), արձանագրությամբ (Արքակունիս), սակայն մեծ մասամբ այն ունենում է ավելի փոքր կամարական խորշ, որի մեջ սովորաբար ազուցվում են խաչքարեր, կամ ուղղակի խաչ և քանդակվում (Քանաքեռի Եկեղեցիներ, Երևանի Ս. Չորավոր, Փառակայի Ս. Նակոր):

XVII դ. խաչի քանդակը և խաչքարը դարձան Եկեղեցիների արտաքին դատերի հարդարանքի գլխավոր տարրերից: Ինչուս նշում է Շաքարիա Ազուլեցին, գերեզմանատների «անտեր» և «ամնչան» հանգույցաների տաղանաքարերը ուղղակի դրվում էին նորակառույց Եկեղեցիների դատերի շարվածքում: Որոշ հուշարձաններում խաչքարերը օգտագործվել են լոկ որդես շինանյութ՝ առանց հաշվի առնելու նրանց դեկորատիվ նշանակությունը: Օրինակ՝ Չորի եռամավ բազիլիկի արևմտյան դատի երկու շարքը կառուցվել է հորիզոնական դիրքով դրված խաչքարերից: Անխնամ խաչքար-գերեզմանաքարերի օգտագործումը Եկեղեցիների դատերի շարվածքում ուներ այն դրական հետևանքը, որ նրանք փրկվեցին քայլայումից, վնասվելուց կամ ուղղակի ոչնչացումից, որի շնորհիվ մեզ են հասել այդ մեճորիալ հուշարձանների բազմաթիվ, գեղարվեստական և դատմական մեծ արժեք ունեցող, դատկերաբանդակներով ու վիճագիր արձանագրություններով հարուստ կորողներ:

Եկեղեցիների մեծ մասում խաչքարը դրվել է, սակայն, նկատի ունենալով նրանց գեղագիտական դերը շենքի ճակատների հարդարանքի գործում: Նրանք հատկապես տեղադրվում էին կառույցի մուտքի հետ փոխկադակցված, որով փորձ էր արվում շքամուտքի և խաչքարերի միջոցով ստանալ տվյալ ճակատի (դա մեծավ մասամբ արևմտյանն էր լինում) ձևավորումը: Մի շաբք հուշարձաններում դա արվել էր շափազանց դարզունակ. մուտքի կամարական խորշի երկու կողմում, որոշ հեռավորությամ վրա, սիմետրիկ ազուցվում են տարրեր մեծության և չափի խաչքարեր (Նալիճորի Ս. Մինաս, Կարրիի Ս. Աստվածածին, Գոմերի Ս. Գրիգոր): Աստաղատի Կարմիր վանքում խաչքարերն արդեն կից են Եկեղեցու շքամուտքին, իսկ հաջորդ քայլը եղավ նրանց համատեղումը, երբ երկու խաչքար դրվում էին արդեն դրան բացվածքի երկու կողմում՝ դառնալով շքամուտքի բաղկացուցիչ մասը (Քարահոնջ, Չոր):

Այսդիսի լուծումը գեղարվեստական ստումով ավելի հաջող էր, և շքամուտքերը ստանում էին լրացուցիչ քանդակագարդ տարր, որն ուժեղացնում էր նրանց արտահայտչականությունը: Ինքնատիդ է Գիտաքանի բազիլիկի հարավային շքամուտքը, որն իր երկու կողմում դրված խաչքարերի հետ ներառված է գալարահյուս ընդհանուր շքանակի մեջ: Բայց ամենուր հնարավորություն չկար նորակառույց շենքում խաչքար ազուցել, և քարագործ վարդետները Եկեղեցիների մեծ մասում խաչքարատիդ քանդակներ էին իրականացնում: Այդ արվում էր մե-

կենասների դատվերով, համալատասխան արձանագրությամբ (կամ առանց դրա) և կառուցի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր էր հանդիսանում: Այս դիսի խաչաքանդակները հատկապես լայնորեն կիրառվեցին Նախշնանի ու Այրարատի սրբատաշ տուֆից կառուցվող շենքերում:

Խաչքարատիմ քանդակներ արվում էին ինչպես եկեղեցիների լայնական դատերում, այնպես է արևելյան ու արևմտյան ճակատներում: Դրանք քանդակվում էին սիմետրիկ այդ ճակատների ուղղաձիգ առանցքին, ճակտոնի հարթության մեջ (Երևանի Չորավոր, Խոր Վիրապի Ս. Աստվածածին, Կարքի Ս. Աստվածածին, Կոնդի Ս. Շովիաննես եկեղեցիներ), կամ արևելյան ճակատում արսիդի լուսամուտի երկու կողմում (Ցղնայի Ս. Աստվածածին եկեղեցի):

Խաչքարակալը դարձավ նաև շքամուտքի դեկորատիվ տարրերից՝ տիմանի դատկերաքանդակից կամ արձանագրությունից ազատ մակերեսին փորագրվում էր ոչ մեծ, ուղղանկյուն շրջանակի մեջ հյուսածն զարդաքանդակներով շրջադատված խաչ (Քանաքեռի Ս. Խալոր և Ս. Աստվածածին, Արցախում Թադասեանի, Ներիների Ս. Գրիգորիս, Շակունի Շաղկավանք, Սյունիքում Լորի Ս. Գևորգ եկեղեցիներ և այլն):

Վաղ միջնադարից սկսած՝ Շայաստանի կրոնական և աշխարհիկ մոնումենտալ շենքերի ողջ հարդարանքում կարևոր դեր է խաղացել շքամուտքը: Ուշ միջնադարում ևս այն ճակատների ձևավորման զյուսպոր, իսկ Սյունիքի ու Արցախի հուշարձանների մեջ մասում՝ միակ տարրն էր: XVII-XVIII դդ. շքամուտքի նոր տիպ փաստորեն շատեղծվեց՝ օգտագործվեցին միջնադարում մշակված հորինվածքները: Սակայն նրանք ենթարկվեցին այնովհայ եական վերամշակման, որ զգալի հեռացան նախատիղերից իրենց և՛ կերպարով, և՛ համաշափություններով, և՛ ամենակարևորը՝ զարդաքանդակների ձևերով:

Նայ ճարտարագետության վաղ միջնադարի շքամուտքի դասական տիպը ունի դրան երկու կողմում տեղադրված, դասի հարթությունից դուրս եկող որմնամույթերի կամ զույգ կիսասյուների վրա ձգվող կամար, ճակտոնե ծածկով (միշարք հուշարձաններում՝ առանց դրա): Շետագայում՝ IX-XI դդ. ևս այս հորինվածքը (առանց ճակտոնի) եղավ ամենատարածվածը, որը XII-XIV դդ. ունեցավ իր զարգացումը՝ ներառվելով ուղղանկյուն շրջանակի մեջ¹: Եղան նաև սակավաթիվ կիրառված այլ տիպեր ևս (Երկիարկ, շքաքարային, սանդղաձև շքանակով, ցորուկաձև կամարով, ուղղանկյուն շրջանակով): Ուշ միջնադարում շքամուտքերի համար վերցրեցին դասական հորինվածքի մի մասնակի դեռքը. քանդակագարդ քազմաշերտ կամարը քացվածքի երկու կողմից իշնում է մինչև գետին, առանց կիսասյունիկների կամ սյունափնջերի: Այս ենթատիմը միջնադարում իր զարգացումը շունեցավ՝ միայն նրա նախնական գաղափարը որոշ մոտավորությամբ արտահայտվեց Շաղկավանի Ս. Շահն եկեղեցու գավթում (սա-

կայն կամարի առաջին գոտին հանգչում է մեկական կիսայունիկների վրա) և Շաղարծինի Ս. Ստեփանոս Եկեղեցում (քայլ որը ներառված է քառայուն սրահի մեջ): Ուշ միջնադարում շքամուտքի այս տարբերակն ունեցավ իր ձևափոխումը և զարգացումը՝ դռան բացվածքը ներառվեց դատի հարթությունից զգալիորեն հետ դրված որմնախորշի մեջ, իսկ մեկ ամրություն կազմող, բազմաթիվ գոտիներից բաղկացած կամարը և շրջանակը մշակվեցին ամենատարբեր բնույթի զարդարանդակներով:

Մյուս կարևոր փոփոխությունը, խորշից բացի, վերաբերում է շքամուտքի համաշափություններին: Թե՛ վաղ միջնադարում, թե՛ X-XIV դդ. շքամուտքերի կամարի կենտրոնը գտնվում է դռան բացվածքի վերին նիշի վրա (կամ մի քանի ամ վերև, որն եւկան չէ): Իսկ XVII-XVIII դդ. հուշարձաններում այն գտնվում է դռան լայն բարավորի վերին նիշի վրա կամ ավելի բարձր, որի հետևանքով շքամուտքերը ստանում են ուղղաձիգ, ձգված համաշափություններ: Սակավայիպ հանդիդում են նաև դասական լուծում ունեցող մուտքեր (կամարի կենտրոնը դռան բացվածքի վերևում), ինչդեռ, օրինակ՝ Մուղնու Ս. Գևորգ Եկեղեցու հարավային շքամուտքում:

Ուշ միջնադարի գեղարվեստական մշակում ունեցող մուտքերի մյուս առանձնահատկությունը շրջանակի գոտիների բազմաքանակ և բազմատեսակ դրվագում ունենալու է: Դիմնական մոտիվներն են՝ ոլորաքանդակը, շաքարը, հյուսածն զարդաքանդակը, իսկ դռան բացվածքի շրջակալը, որդես կանոն, մշակում է ցանցկեն երկրաչափական քանդակներով: Վաստորականում վերը նշված ձևերին ավելանում են նաև «սեղուկյան շղթան» և ոճավորված արմավիկները:

XVII դ. շքամուտքերի մեջ աչքի է ընկնում Մուղնու Ս. Գևորգ Եկեղեցու հարավային դռան գեղարվեստական ձևավորումը: Նրա ուղղամելյուն բացվածքը ունի դարագծով կիսազանիկով շրջանակ, իսկ տիմողանը կիսաշրջան է, ճառագայթներով մշակված: Աղա գայիս են զարդաքանդակների շորս գոտի, որոնք զուգահեռ են դռան բացվածքի ուղղաձիգ կողերին, իսկ վերևում, համակենտրոն կիսաշրջանների ձևով, դժուկում են տիմողանի շորքը: Առաջին գոտին դռան հետ միևնույն հարթության մեջ է գտնվում (դռան բացվածքը հարավային ճակատի հարթությունից բավական հետ է դրված) և ունի բավական բարդ երկրաչափական հյուսածն զարդաքանդակ, զուգակցված վարդյակներով: Նաջորդ գոտին այդ հարթությունից առաջ է դրված և իրենից ներկայացնում է շքաքարային ինքնատիղ մշակում ունեցող շղթա: Երրորդ գոտին զալարածն մշակում ունի, իսկ վերջին՝ շորորդ զարդագոտին, որը դատի հարթությունից շատ քիչ է հետ դրված, մշակված է զամբյուլածն հյուսվածքով: Քանդակները կատարված են բավական նուրբ, բարձր ճաշակով, իրականացված դեղին տուֆից և այս վեր-

Չին հանգամանքը շքամուտքը առավել է շեշտում հարավային ճակատում: Մեծ վարդետությամբ օգտագործված է լուսավորության խնդիրը՝ տարրեր հարթությունների մեջ իրականացված զարդարությունները օրվա տարրեր ժամերին, արևի ճառագայթների ուղղության և բարձրության փոփոխության հետ մեկտեղ, փոխում են իրենց արտահայտչականությունը՝ նորանոր գեղարվեստական կերպար հաղորդելով ողջ շքամուտքին:

Եկեղեցու արևմտյան՝ զիսավոր մուտքը թեղետ ունի ավելի շքեղ հարդարանք, սակայն իր գեղարվեստական արժանիքներով զիջում է հարավային շքամուտքին: Արևմտյան դուռը նոյնույն ուղղանկյուն քացվածք է, որի դարագծով դատվում է բուսական քանդակներով մշակված բավական լայն գոտի: Կիսաշրջանաձև տիմունք զարդարված է բուսական քանդակներով և մեջտեղում ունի կարմիր տուֆից խաչքարի ձևով մշակված քարեն ներդիր: Դասական և կիսաշրջանաձև տիմունքն շորջը օդակվում են տարրեր քանդակներով (շրաբար, երկրաշափական զարդարանդակ, զալարան և այլն) յոթ գոտի, որոնցից մեկն իրականացված է նոյնույն կարմիր տուֆից: Տիմունքի հարդարանքի օրգանական մասն է կազմում նաև շինարարական արձանագրությունը: Մուղնու եկեղեցու արևմտյան մուտքը հարավայինի համեմատ ծանրաբեռնված է զարդարանդակներով: Միևնույն ժամանակ, բացվելով դեռի կամարակաղ սրահը՝ այն մշտադիր գտնվում է ստվերում և հուշարձանի հարդարանքում չունի այն նշանակությունը, ինչ հարավայինը: Ոչ միայն այս դեռքում, այլև մյուս բոլոր այն հուշարձաններում, որոնք արևմտյան կողմից սրահ ունեն, նրանց նոյնական ճռի հարդարված շքամուտքերը զգալի կորցնում են իրենց գեղարվեստական արտահայտչականությունը:

Սահմանափակ տիղի զարդարությունը կիրառելով շքամուտքերի ձևավորման համար՝ ուշ միջնադարի ճարտարապետները խուսափել են միօրինակությունից քավական դարպան հենարքով՝ գոտիների տարրեր համակցությամբ: «Ճամեմատարար տարածված էր հետևյալ հերթականությունը (արտաքին շերտից հաշված)՝ հյուսածոն զարդարանդակով, զալարաքանդակով և շրաբարով գոտիներ (Ազուլիս Ա. Շտովլա և Ա. Քրիստափոր, Յղնայի, Շոռոթի, Նավուց թաոի, Ծակուի, Լորի, Քանաքեռի եկեղեցիներ): Նաջորդականությունն այլ է Փառակայի Ա. Նակոր եկեղեցում (զալարաքանդակ, հյուսածոն զարդարանդակ, շրաբար), ավելանում է շղայաքանդակ գոտի՝ զալարաքանդակի փոխարեն (Կավաքավանք), կամ շրաբարին փոխարինող (Յղնայի եկեղեցու հարավային շքամուտք):

Վասդուրականի եկեղեցիների և զավիքների շքամուտքերում կիրառվել են նաև ոճավորված արձավիկներով և կիսաշրջանիկներով զարդարված գոտիներ: Այս հիմնական զարդարությունները տարրեր համակցությամբ ընդմշվել են նաև կիսագլանաձև գոտիներով, որոնք համանման շքամուտքերին որոշ շափով անհատականություն են հաղորդել:

Վաստուրականի ճարտարապետական դղրոցի XVII-XVIII դդ. շքամուտքերն իրենց ճոխությամբ զիջում են Արևելյան Շայաստանի հուշարձաններին: Չարդագոտիների հաջորդականությունը և ձևերը, սակայն, յուրաքանչյուր շքամուտքում տարբեր են. Չորադիրում (1681 թ. վերակառուցված) արտաքինը հյուսածող զարդարանդակն է, աղա գալարաձևը և կիսաշրջանիկներով, Աղարանքի ծխական եկեղեցում՝ շքաքար, գալարաքանդակ, «սեղուկյան շղթա», Փրկուում՝ հյուսածող և ատամիկներով, Սքանչելագործ վանքում (ուշ միջնադարի վերակառուցում՝ արմավիկներով, գալարաքանդակ, կիսաշրջանիկներով, Վարագավանքի ժամատունը (1648 թ.)՝ արմավիկներով, շքաքարով, նույնի Ս. Աստվածածին եկեղեցում (1648 թ. վերակառուցում՝ արմավիկներ, խաչեր, գալարաձև, շքաքարային, Նոգեաց վանքում՝ գալարախաչով, Լիմ անաղատի ժամատունը (1766 թ.)՝ շքաքար, Կոտուց անաղատում՝ երեք գալարաքանդակ գոտիներ և շքաքար²:

XVII դ. սակավայիկ են շքամուտքերը (հիմնականում գտնվում են Արցախում), որտեղ կամարի գոտիներից արտաքինը հանգչում է անկյունային կիսասյունիկների իմողուստների (Ներիերի Ս. Գրիգորիսի հարավային դուռ, Եղիշա Կուսի անաղատ, Երից մանկանց վանք) կամ որմնասյան վրա (Շակուտի Շաղկավանք, Ներիերի Ս. Գրիգորիսի արևմտյան դուռ): XVII-XVIII դդ., բացի կիսաշրջանաձև կամարից, կիրառվել է նաև պաքաձև, երկկենտրոն կամար և՝ Արցախի, Սյունիքի ու Վաստուրականի հուշարձաններում (Երից մանկանց վանք, Թաղասեռի անաղատ, Ներիերի Ս. Գրիգորիս եկեղեցու հարավային շքամուտք, Շողի Աստվածածին բազիլիկ, Գանձակի Ս. Թովմաս և Մոկսի Ս. Խաչ վանքերի ժամատներ):

Աղարանքի Ս. Խաչ եկեղեցու շքամուտքի կամարը ցոռվածն է, ներառված ուղղանկյուն շրջանակի մեջ. նման հորինվածքը ուշ միջնադարում եղակի մնաց: XIII–XIV դդ. եկեղեցական և աշխարհիկ մոնումենտալ շենքերում տարածում գտավ աստիճանաձև թաղի ձև ունեցող շքաքարային ծածկով խորշով շքամուտքը: Նայ շինարարները ստեղծագործաքար վերամշակեցին մահմեղական արվեստի ազդեցության արդյունք ճարտարապետական այդ ձևը՝ օգտագործելով այն ամենաքաղաքան գործառնություն ունեցող շենքերում (Անիի Առաքելոց եկեղեցու և Նեղուցի վանքի գավիթներ, Մինակ Սահմադինի դահլիճ, Սովորական քարավանատուն, Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցի): Ուշ միջնադարում այն կիրառվեց երկու հուշարձանում՝ Ստեփանոս Շախավելի վանքի արևմտյան մուտքում և Կոտուց անաղատի գավթում: Օտարամուտ այս ձևը Ստեփանոս Շախավելի վանքում ներդաշնակում է արևմտյան ճակատի ընդհանուր հարդարանքին, որը ստացվում է մուտքի շքաքարային բազմաստիճան խորշի երկու կողմում եռաստիճան կամարներով որմնախորշերը տեղադրելով և այս որվագծով միմյանց նման հարդարանքի երեք տարրը միևնույն հյուսածող զարդագո-

տիով շրջանակելով: Իսկ Կտոր անաղատում շրաբարային խորշով մուտքը բացվում է զավթի արևմտյան ճակատի հետ համատեղված զանգակատան ծավալի մեջ՝ առանձնանալով զավթից և ուղղաձիգ համաշխատություններով օրգանական ամբողջություն կազմելով զանգաշտարակի հետ:

Ենքնատիոյ է Տաքե զյուղի Ս. Մինաս եկեղեցու շրամուտքը, որը ներառված է զագարում վեղարաձև եկուստով որմնախորշի մեջ՝ հար և նման Երից մանկանց վանքի հարավային լուսամուտի ձևավորմանը:

Եզակի մնաց Երևանի Շորավոր եկեղեցու հարավային շրամուտքը՝ ուղղանկյուն լայն շրջանակով, կազմված զույգ, լայն և ցցուն զալարաքանդակ գոտիներից, որոնց միջի հարթ մակերեսը հատկացված է արձանագրությանը: Շրամուտքի այս տիտղը միջնադարում նոյնամես տարածում չգտավ և հանդիպում է միայն մեկ անգամ՝ Սանահնի Ամենափրկիշ եկեղեցու զավթում (1181 թ.):

Ուշ միջնադարի շրամուտքերը, հորինվածքների տիտերով առնշվելով IX-XIV դդ. ձևերին, միաժամանակ հարդարանքի բնույթով զգալի տարրերվում են նախօրինակներից: Առաջին՝ XVII-XVIII դդ. բուսական զարդաքանդակ համարյա չկիրառվեց, մինչդեռ միջնադարում այն մեծ տարածում ուներ: Երկրորդ՝ չկիրառվեց քարե մողախկան, որը XII-XIII դդ. շրամուտքերի ճակտոնաղատերի ձևավորման կարևոր և տարածված միջոցներից էր: Երրորդ չօգտագործվեց XIII դ. տարածված այն հնարքը, երբ մողախկայի իմիտացիա էր արվում քանդակը երկու հարթությամբ իրականացնելիս: Ուշ միջնադարում բացվածքի շուրջն ընթացող հարթ զարդագոտիները, ինչդես և կամարակադր խորշի գոտիներից արտաքինները նշակվում էին բացառապես երկրաշափական զարդաքանդակով, որը երկու տիտղի էր՝ տողանային (միանման տարրերի ոփամիկ շարքով ստացվող) և ցանցային: Մեծ տարածում ուներ նաև հյուսածն զարդաքանդակը: Իսկ բուսական հարդարանդակը սահմանափակ կիրառվեց Այրարատում, Վասուրականի և Նախիջևանի դղբոցներում, ընդ որում, բավական ոճավորված և սիսեմատիկ (Յղնա, Ռամիս, Փառակա, Երևանի Շորավոր, Էջմիածնի Մայր տաճարի զանգակատուն XIII դ., Վարագավանք, Զորագիր):

Սակայն XVII դ. շրամուտքերում հանդիպում է բուսական նի զարդամուտիկ, որն ակնհայտ ներմուծված է արևմտաեվրոպական արվեստից: Լոր զյուղի եռանավ բազիլիկի ու Յղնայի Աստվածածին եկեղեցու դրան ուղղանկյուն բացվածքի լայն շրջանակին քանդակված են սափորներ, որոնցից փնջերով դուրս են գալիս զալարվող ցողուններ՝ փարթամ տերևներով և ողորված ելուստներով: Այս քանդակը, որը գրավում է շրջանակի ողջ մակերեսը, իր նկարվածքով խորթ է հայկական արվեստին և ակնհայտ ոճի բարոկկյան բնույթ՝ հակադրվելով այդ ժամանակաշրջանի մյուս շրամուտքերի զարդաձևերին³: Բարոկկյան դեկորատիվ մոտիվների երևան զալը XVII դ. Նայաստանում հետևանք էր հայ վաճա-

ռականության սերտ կաղերի՝ արևմտաեվրոպական երկրների, առաջին հերթին Իտալիայի հետ (դատահական չէ, որ Լորի և Յղնայի եկեղեցիների կտիտորները վաճառականներ էին), որտեղից նրանք ներմուծում էին նաև կիրառական արվեստի գործեր, ինչողևս նաև հայերեն լեզվով այնտեղ հրատարակվող կրոնական գրքեր: Ընդ որում, մի շաբթ հայերեն Աստվածաշնչեր դատկերազարդվել են արևմտաեվրոպական նկարիչների կողմից: Ամստերդամում 1666 թ. տողված հայերեն Աստվածաշնչը նկարազարդվել է հոլանդացի նկարիչ Քրիստոֆել Վան Չիխեմի կողմից և դարունակում է բազմիցս կրկնվող փարթամ ծաղիկներով սափորներ, որոնք իրենց կատարման ոճով միանգամայն նման են Լորի և Յղնայի եկեղեցիների շքամուտքերի սափորներին (այս մոտիվը հանդիդում է նաև Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան առաջին հարկի քիվում և ներսի դատերին):⁴

1 Ռ. Ազատյան, *Армянский портал*, Ереван 1947, стр. 19-25.

2 J-M. Thierry, *Monuments arméniens du Vaspurakan*, Paris 1989, p. 117.

3 А.Я. Якобсон, *Очерк истории зодчества Армении V-XVII веков*, Москва-Ленинград 1950, стр. 151.

4 Նոյն տեղում, էջ 152:

MEANS OF ARTISTIC EXPRESSION IN THE ARMENIAN ARCHITECTURE OF THE XVII-XVIII CENTURIES

MURAD HASRATYAN

Doctor in Architecture

Professor at YSAFA

Corr. Member of NASA

Armenian architects in the late Middle Ages modified traditional elements of decorations and created new ones according to aesthetic perceptions of the epoch and according to the demands and tastes of the customer merchant class as well. Active elements of facade decorations of churches in Ayrarat, Nakhijevan and in Atrpatakan became enveloping all over the perimeter of the girdle (belt) archer, acroterions and wide niches as a novelty on western facades. The portal became an element of the façade which became the main and in fact the unique façade element in Sunik and Artsakh. A version of classical composition was taken (ornamented, stepped-arches in two sides of the doorway going down to the ground) which underwent processing. One of the main elements of the decoration of the outside walls of the church were the ancient khachkars set in them and new reliefs as khachkars as well. Relief-shaped images became widespread, especially in the monuments of Nakhijevan school. A great number of sculptures was made, especially the ones on the themes of „The New Testament„, „Madonna with the Child„, in the first place and images of apostles. The interiors of Yerevan, Echmiadzin, Agulis and Shorot churches were decorated with frescos harmoniously combining the influence Armenian miniature with motifs of West European fine arts and Persian ornamental arts.

СРЕДСТВА ХУДОЖЕСТВЕННОЙ ВЫРАЗИТЕЛЬНОСТИ В АРХИТЕКТУРЕ АРМЕНИИ XVII-XVIII ВЕКОВ

МУРАД АСРАТЯН

Доктор архитектуры

Профессор ЕГАХ

Член корр. НАНА

Армянские архитекторы в позднем средневековье переработали традиционные элементы декоративного убранства и создали новые, соответствующие эстетическим восприятиям эпохи, а также требованиям и вкусу нового социального типа заказчика-купечества. Активными элементами убранства фасадов церквей в Айрапате, Нахиджеване, Атрпатакане стали охватывающий по всему периметру пояс, пристенные арки, акротерии и явившиеся новостью, широкие ниши на западных фасадах. Главным, а в Сюнике и Арцахе фактически единственным элементом фасадов стал портал. Был взят вариант классической композиции (орнаментированная ступенчатая арка с обеих сторон проема спускается до земли), который подвергся переработке. Одним из главных элементов убранства внешних стен церквей явились вставленные в них древние хачкары и новые рельефы в виде хачкаров. Широкие распространение получили рельефные сюжетные изображения, особенно в памятниках Нахиджеванской архитектурной школы. Большое число составляют скульптуры на темы Нового завета, в первую очередь “Богоматерь с младенцем” и портреты апостолов. Интерьеры церквей Еревана, Эчмиадзина, Агулиса, Шорота украшались фресками, гармонично сочетающимися в себе особенности, обусловленные влиянием армянской миниатюры с мотивами западноевропейского изобразительного и персидского орнаментального искусства.

Նվիրվում է անվանի հայագետ, արվեստաբան, հայ միջնադարյան մշակույթի ան-
գերազանցելի գիտակ Ալիքարիփի Տեր Ներսեսյանին, որի հիմնած «Նայ արվեստի
ուսումնասիրության հիմնադրամի» առաջին թոշակառուն լինելու մեծ դատիվն են
ունեցել: